ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փ. 164, 1501
Հեռ. (0261) 4-00-00, (0261) 2-43-23
Կայք sevancity.am
Էլ. փոստ sevan.gegharquniq@mta.gov.am

30 օգոստոսի 2024թ.

N ԱԿ 1/1793

«ԳՐԻՆԿԳՈ» ՍՊԸ տնօրեն
պրն. Բ. Ավալյանին
grigsams@yahoo.com
Ք. Երևան, Այծեմնիկ Ուրարտու, 150

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Ավալյան,

Սևանի համայնքապետարանի և «ԳՐԻՆԿԳՈ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի օգոստոսի 15-ին կնքվել է ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2024/16 ծածկագրով պայմանագիրը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 199-րդ, 120-րդ և 121-րդ կետերով սահմանված կարգի «ԳՐԻՆԿԳՈ» ՍՊԸ-ն հանդիսանում է «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ-ի հետ փոխկապակցված անձ («ԳՐԻՆԿԳՈ» ՍՊԸ 100% բաժնեմասերի սեփականատեր Սամսոն Արտաշեսի Գրիգորյանը միաժամանակ հանդիսանում է նաև «Մարմարի Աշխարհ» ՍՊԸ 20% բաժնեմասերի սեձականատեր):

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված կարգով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Պետական Վերահսկողական Ծառայության 30.08.2024թ. թիվ Ե/2033-24 գրությունը, Սևանի համայնքապետարանը հրաժարվում է ԳՐԻՆԿԳՈ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի օգոստոսի 15-ին կնքվել է ԳՄՍՀ-ԳՀԾՁԲ-2024/16 ծածկագրով պայմանագրից, համարելով այն միակողմանի լուծված:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Ծանուցման հրապարակումից հետո կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Ա. Մուրադյան